ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋՈՑՈՎ

ՎՋՄԲ ՎԱՐԿ 8786-AM

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած
ժամանակաշրջանի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6

ՖՈՆԴԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .. 8

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 10

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ 17

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՈՒԴԻՏՈՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ 18

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Ռոզման Համակարգերի Բարելավման Ծրագրի Լրացուցիչ Ֆինանսավորում (Ծրագիր) ծրագրի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 2017թ. նոյեմբերի 20-ին կնքված ՎՁՄԲ 8786-ԱՄ Վարկային համաձայնագրով (Վարկային համաձայնագիր) ֆինանսավորվող և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի միջոցով (ՋՏ ԾԻՄ) իրականացվող "Ռոզման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում" (Ծրագիր) ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. Հունիսի 11-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, վարկային միջոցների առհանումների մասին հաշվետվությունը, նպատակային հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2020թ. հունիսի 11-ի դրությամբ Ծրագրի ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի ֆոնդերի ստացումները և օգտագործումը՝ համաձայն սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետություններին կից 2-րդ ծանոթագրությունում ներկայացված հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:
Մենք անկախ ենք Ծրագրից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Հատուկ նպատակների հիմունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են հատուկ նպատակների հիմունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Հանգամանքների շեշտադրում – Ծրագրի ավարտ

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից 9-րդ ծանոթագրությանը, որը բացահայտում է, որ Ծրագիրն ավարտվել է հաշվետվությունների ներկայացման ամսաթվի դրությամբ:

Հանգամանքի շեշտադրում –Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխություն

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում 1.4-ին, որտեղ ներկայացված է Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխությունը:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն սույն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից 2-րդ ծանոթագրությունում ներկայացված հաշվապահական հաշվառման հիմունքի: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում առաջացած էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:
Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Ծրագրի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված Վարկային համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են,
2. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային համաձայնագրի: Ծրագրի կողմից ներկայացված Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (ՄՖՆ-ներ) համապատասխանում են հաշվապահական համապատասխան գրանցումներին,
3. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների,
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2019թ. հունվարի 1–ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
25 հունիսի, 2020թ.

Վահագն Ստեփանյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
ՎԶՄԲ վարկ 8786- AM
2020թ. հունիսի 11-ի դրությամբ

	Ծնթ.	11.06.2020 ԱՄՆ դոլար	01.01.2019 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ			
Նպատակային հաշիվ ՎԶՄԲ վարկ (ԱՄՆ դոլար)		631,741.15	588,609.13
Տեղական արժույթի հաշիվ - ՀՀ Կառավարություն (ՀՀ դրամ)		868.14	-
Ընդամենը դրամական միջոցներ		**632,609.29**	**588,609.13**
Կանխավճարներ	4	-	195,551.12
Ծրագրի աճողական ծախսեր	3	1,616,189.52	781,551.38
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**2,248,798.81**	**1,565,711.63**
ՖՈՆԴԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կրեդիտորական պարտքեր	5	-	29,493.38
Ֆոնդեր			
ՎԶՄԲ վարկ 8786- AM	6.1	1,924,228.44	1,348,294.47
ՀՀ Կառավարություն	6.2	321,510.08	189,274.95
Ընդամենը ֆոնդեր		**2,245,738.52**	**1,537,569.42**
Արտարժութային օգուտ (վնաս)	7	3,060.29	(1,351.17)
ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**2,248,798.81**	**1,565,711.63**

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ծրագրի ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 25-ին: Կից ծանոթագրությունները հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Մամիկոն Գասպարյան
ՀՏՉՀ տնօրենի տեղակալ-մասնագիտության տնօրեն

Նարինե Քեռյան
ՀՏՉՀ ՋՏ ԾԻՄ գլխավոր հաշվապահ

ՖՈՆԴԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
ՎԶՄԲ վարկ 8786- AM
2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

ԱՄՆ դոլար

	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական 11.06.2020թ. դրությամբ	Հաշվետու ժամանակա-շրջան	Աճողական 11.06.2020թ. դրությամբ	Հաշվետու ժամանակաշր-ջան	Աճողական 11.06.2020թ. դրությամբ	
Սկզբնական շրջանառու կապիտալ							
Դրամական միջոցներ	588,609.13	-					
Կանխավճարներ	195,551.12	-					
Կրեդիտորական պարտքեր	(29,493.38)	-					
Ընդամենը	**754,666.87**	**-**					
Ֆոնդերի աղբյուրներ							
ՎԶՄԲ վարկ 8786- AM	575,933.97	1,924,228.44					2,000,00.00
ՀՀ Կառավարություն	132,235.13	321,510.08					500,000.00
Ընդամենը	**708,169.10**	**2,245,738.52**					**2,500,000.00**
Փոխարժեքային օգուտ/(վնաս)	4,411.46	3,060.29					
Ֆոնդերի օգտագործում							
1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	834,638.14	1,611,189.52	1,500,369.20	1,622,094.22	(665,731.06)	(10,904.70)	2,495,000.00
2.Ծրագրի նախնական վճար	-	5,000.00	-	5,000.00	-	-	5,000.00
Ընդամենը	**834,638.14**	**1,616,189.52**	**1,500,369.20**	**1,627,094.22**	(665,731.06)	(10,904.70)	**2,500,000.00**
Վերջնական շրջանառու կապիտալ							
Դրամական միջոցներ	632,609.29	632,609.29					
Կանխավճարներ	-	-					
Կրեդիտորական պարտքեր	-	-					
Ընդամենը	**632,609.29**	**632,609.29**					

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
ՎՋՄԲ վարկ 8786- AM
2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Ծրագրի բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու ժամանակա-շրջան	Ամբողջական 11.06.2020թ. դրությամբ	Հաշվետու ժամանակա-շրջան	Ամբողջական 11.06.2020թ. դրությամբ	Հաշվետու ժամանակա-շրջան	Ամբողջական 11.06.2020թ. դրությամբ	
Մաս 1. Ոռոգման համակարգի բարելավում	**571,350.58**	**1,193,894.25**	**1,181,114.00**	**1,204,837.76**	**(609,763.42)**	**(10,943.51)**	**2,000,000.00**
1.1. Մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի	571,350.58	1,193,894.25	1,181,114.00	1,204,837.76	(609,763.42)	(10,943.51)	2,000,000.00
1.2. Մեխանիկական եղանակով ստացած ջուր տեղափոխող և այլ ջրանցքների վիճակի բարելավում	-	-	-	-	-	-	-
Մաս 2. Կառավարման տեղեկատվություն	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
2.1. Տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում	-	-	-	-	-	-	-
2.2. Կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի (SCADA) տեղադրում	-	-	-	-	-	-	-
Մաս 3. Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ներին աջակցություն	**263,287.56**	**417,295.27**	**319,255.20**	**417,256.46**	**(55,967.64)**	**38.81**	**500,000.00**
3.1. Ծրագրի կառավարում	242,141.22	386,016.96	296,255.20	385,982.47	(54,113.98)	34.49	480,000.00
3.2. Աջակցություն ՋՕԸ-ներին	21,146.34	31,278.31	23,000.00	31,273.99	(1,853.66)	4.32	20,000.00
3.2.1 Աջակցություն ՋՕԸ-ների անձնակազմին	*21,146.34*	*31,278.31*	*23,000.00*	*31,273.99*	*(1,853.66)*	*4.32*	*20,000.00*
3.2.2 ՋՕԸ-ների գործառնական մարմինների զարգացում	-	-	-	-	-	-	-
3.2.3 Տեղեկացվածության բարձրացում	-	-	-	-	-	-	-
Ծրագրային ծախսեր	**834,638.14**	**1,611,189.52**	**1,500,369.20**	**1,622,094.22**	**(665,731.06)**	**(10,904.70)**	**2,500,000.00**
Ծրագրի նախնական վճար	-	5,000.00	-	5,000.00	-	-	-
Ընդամենը ծրագրային ծախսեր	**834,638.14**	**1,616,189.52**	**1,500,369.20**	**1,627,094.22**	**(665,731.06)**	**(10,904.70)**	**2,500,000.00**

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(SOE և SUMMARY SHEET)

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
ՎԶՄԲ վարկ 8786- AM
2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Դիմումի հաստատման ամսաթիվ	1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	Ընդամենը
3	22.01.2019	411,390.87	411,390.87
4	05.06.2019	131,913.33	131,913.33
5	24.07.2019	32,629.77	32,629.77
6	28.10.2019	30,996.56	30,996.56
7	28.04.2020	147,299.10	147,299.10
8	10.06.2020	189,963.19	189,963.19
Ընդամենը		944,192.82	944,192.82

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռոդման համակարգերի բարելավման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8786- AM
2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

Նպատակային հաշիվ	ՎԶՄԲ Վարկ 8786-AM
Արժույթ	ԱՄՆ դոլար
Հաշվարկային հաշիվ	900000906132
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն

	01.01.2019-11.06.2020 ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ ԱՄՆ դոլար
1. Սկզբնական մնացորդը	588,609.13
Ավելացում	
2. Սկզբնական անհամապատասխանություն	-
3. ՎԶՄԲ ֆոնդի կանխավճար/համալրում	575,933.97
Նվազեցում	
4.Նպատակային հաշվից մարում ՎԶՄԲ-ին	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	1,164,543.10
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդը 11.06.2020թ. դրությամբ	631,741.15
Ավելացում	
7. Վճարված ընդունելի ծախսումներ	532,801.95
8. Ծառայությունների վճարներ (եթե դեբետագրվել են նպատակային հաշվին)	-
Նվազեցում	
9. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշվին)	-
10. Ընդամենը հաշվարկված կանխավճար/համալրում	1,164,543.10
11. Տարբերություն (5)-(10)	-

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
ՎԶՄԲ վարկ 8786- AM
2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորում

2017թ. նոյեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև կնքվել է համաձայնագիր, համաձայն որի ՎԶՄԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 2,000,000 ԱՄՆ դոլար գումարով 8786-AM վարկ Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով:

Ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2018թ. մայիսի 18-ին: Վարկային համաձայանագրով Ծրագրի ավարտը սահմանված է 2019թ. հունիսի 30-ին: 2019թ. հունիսի 27-ին Համաշխարհային Բանկի կողմից Ծրագրի ավարտման ամսաթիվ է սահմանել 2019թ. դեկտեմբերի 31-ը: Առհանումների դիմումների ներկայացման ժամկետը սահմանված է Ծրագրի ավարտից վեց ամիս հետո՝ մինչև 2020թ. հունիսի 30-ը:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակներն են՝
ա) կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը և բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում,
բ) բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հասանելիությունը՝ որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Ա - Ոռոգման համակարգի բարելավում,
Բ - Կառավարման տեղեկատվություն,
Գ - Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցություն:

1.3. Ծրագրի բյուջեն

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ),
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն):

Համաֆինանսավորման 20% տոկոսադրույք է գործում Ծրագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական բնույթի ծառայությունների, խորհրդատուների ծառայությունների, ուսուցման և գործառնական ծախսերի համար:

Կատեգորիա	ՎԶՄԲ 8786-ԱՄ	ՀՀ Կառավա-ություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	1,995,000	500,000	2,495,000
2. Ծրագրի նախնական վճար	5,000	-	5,000
Ընդամենը	**2,000,000**	**500,000**	**2,500,000**

1.4. Ծրագրի իրականացում

Մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը Ծրագիրը իրականացվել է ՀՀ Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՋՏ ԾԻԳ) կողմից:

2019թ. դեկտեմբերի 30-ից դադարեցվել է ՋՏԾԻԳ-ի գործունեությունը՝ համաձայն 2019թ. փետրվարի 28-ի թիվ 170-Ն ՀՀ Կառավարության որոշման: ՋՏԾԻԳ-ի փոխարեն Ծրագրի իրականացման գործառույթները շարունակելու է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ կառուցվածքային ստորաբաժանման միջոցով: 2020թ. Հունվարի 14-ին այդ նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ստեղծվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ (ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ):

ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փակուղի 8:

2. Հաշվապահական հաշվառում

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ըստ հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (մարտ 2010)՝ «RM 3 - Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ի համաձայն:

Համաձայն հաշվապահական հաշվառման հաշվեգրման մեթոդի՝ ծախսերը ճանաչվում են գործառնությունների կատարման պահին և ոչ՝ դրամական միջոցների կամ դրանց համարժեքների ստացման կամ վճարման պահին: Գործառնությունները հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում գրանցվում ու ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերում են:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,
- ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը,
- վարկային միջոցների առհանումների հաշվետվությունը,
- նպատակային հաշվի հաշվետվությունը,
- հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է:

2.2 Գործարքներ արտարժույթով

Ծրագրի հաշիվները վարվում են և գործարքները կատարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված ՀՀ Կառավարության ներդրումները փոխարկվում են ԱՄՆ դոլարով յուրաքանչյուր փոխանցման օրվա ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին փոխարկվում են ԱՄՆ դոլարով վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են հաշվեփակման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- արտարժույթի փոխանակումից առաջացող օգուտները և վնասները ճանաչվում և ներկայացվում են ֆինանսական հաշվետվություններում զուտ գումարով որպես Փոխարժեքային տարբերություն:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 483.75 դրամ:
2020թ. հունիսի 11-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 481.61 դրամ:

2.3 Հարկեր

Ծրագրի գծով հարկերը և պարտադիր վճարները հաշվարկվում և վճարվում են համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության:

3. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆոնդերի

Ծախսային հոդվածներ	01.01.2019 - 11.06.2020			Կուտակային 11.06.2020թ. դրությամբ		
	ՎԶՄԲ վարկ 8786-AM	ՀՀ Կառավա-ություն	Ընդամենը	ՎԶՄԲ վարկ 8786-AM	ՀՀ Կառավա-ություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	667,710.57	166,927.57	834,638.14	1,288,941.76	322,247.76	1,611,189.52
2. Ծրագրի նախնական վճար	-	-	-	5,000.00	-	5,000.00
Ընդամենը	667,710.57	166,927.57	834,638.14	1,293,941.76	322,247.76	1,616,189.52

4. Կանխավճարներ

	11.06.2020 ԱՄՆ դոլար	01.01.2019 ԱՄՆ դոլար
Աշխատանքների գծով	-	194,959.75
Գործառնական ծախսերի գծով	-	591.37
Ընդամենը	-	195,551.12

5. Կրեդիտորական պարտքեր

	11.06.2020 ԱՄՆ դոլար	01.01.2019 ԱՄՆ դոլար
Աշխատանքների գծով	-	29,493.38
Ընդամենը	-	29,493.38

6. Ֆինանսավորում

6.1 ՎՁՄԲ վարկ 8786- AM ֆինանսավորում

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Առ 11.06.2020 կուտակային ԱՄՆ դոլար
Կանխավճար	(368,258.85)	631,741.15
SOE	944,192.82	1,287,487.29
Նախնական վճար	-	5,000.00
	575,933.97	1,924,228.44
Ընդամենը բյուջե		2,000,000.00
Առ 11.06.2020 տրամադրված ֆինանսավորում %		96%

6.2 ՀՀ Կառավարության ֆինանսավորում

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Առ 11.06.2020 կուտակային ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	132,235.13	321,510.08
	132,235.13	321,510.08
Ընդամենը բյուջե		500,000.00
Առ 11.06.2020 տրամադրված ֆինանսավորում %		64%

7. Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(վնաս)

	11.06.2020 ԱՄՆ դոլար	01.01.2019 ԱՄՆ դոլար
Կրեդիտորական պարտավորությունների վերաներկայացումներից	1,893.69	(759.76)
Դրամական միջոցների մնացորդների վերաներկայացումներից	1,166.60	(591.41)
	3,060.29	**(1,351.17)**

8. Բյուջեի կատարում

Ծախսային հոդված	Աճողական ծախսումներ 11 հունիս 2020թ. դրությամբ ԱՄՆ դոլար	Ընդամենը բյուջե ԱՄՆ դոլար	Կատարում %
1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	1,611,189.52	2,495,000.00	65%
2. Ծրագրի նախնական վճար	5,000.00	5,000.00	100%
Ընդամենը	1,616,189.52	2,500,000.00	65%

9. Ծրագրի ավարտ

Ծրագիրն ավարտվել է 2019թ. դեկտեմբերի 31-ին (Ավարտման ամսաթիվ), և գործարքները ավարտվել են 2020թ. հունիսի 11-ին (Հաշվետվության ամսաթիվ):

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ (հունիսի 25, 2020).

ա. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո այլ ծախսեր, բացի վերջնական աուդիտից, չեն կատարվել, արտոնյալ ժամանակահատվածում վճարումները վերաբերում են մինչև Ավարտման ամսաթիվը կատարված ծախսերին,

բ. Հաշվետվության ամսաթվից հետո ՎՁՄԲ 8786 վարկի գծով առհանումներ չեն կատարվել,

գ. Հաշվետվության ամսաթվից հետո չկան ՀԲ-ին ներկայացված Ծրագրին վերաբերվող ծախսեր,

դ. Հաշվետվության ամսաթվի դրությամբ չկան Ծրագրին առնչվող կանխավճարների և կրդիտորական պարտքերի մնացորդներ:

ե. Հաշվետվության ամսաթվին դրամական միջոցների մնացորդները իրենցից ներկայացնում են .

- Նպատակային հաշվի 631,741.15 ԱՄՆ դոլար մնացորդը, աուդիտորական ծառայության դիմաց վճարելուց հետո մնացած գումարը ենթակա է վերադարձման Համաշխարհային Բանկին:
- Ծրագրի հաշվի (ՀՀ Կառավարության համաֆինանսավորման) 868.14 ԱՄՆ դոլար մնացորդը նախատեսված է աուդիտորական ծառայության համաֆինանսավորման գումարը վճարելու համար,

զ. Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ որևէ սպասվող կամ փաստացի դատական հայցի մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
ՎՁՄԲ վարկ 8786- AM
2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Կատեգորիա	Դիմում	Ծրագիր	ՀԲ	Տարբերություն
Կանխավճար (մարում)-	6	(30,996.56)	(30,996.56)	-
	7	(147,299.10)	(147,299.10)	-
	8	(189,963.19)	(189,963.19)	-
		(368,258.85)	**(368,258.85)**	
1.Ծրագրի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական բնույթի ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր	3	411,390.87	411,390.87	-
	4	131,913.33	131,913.33	-
	5	32,629.77	32,629.77	-
	6	30,996.56	30,996.56	-
	7	147,299.10	147,299.10	-
	8	189,963.19	189,963.19	-
		944,192.82	**944,192.82**	
Ընդամենը		**575,933.97**	**575,933.97**	

Ղեկավարության Կողմից Աուդիտորին Ուղղված Հավաստագիր

25 հունիսի 2020

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Դ.Անհաղթի 23/6, 5-րդ հարկ
Երևան, Հայաստան

Հավաստումների սույն գրությունը ներկայացվում է 2017թ. նոյեմբերի 20-ին կնքված ՎԶՄԲ 8786-AM Վարկային համաձայնագրով (Վարկային համաձայնագիր) ֆինանսավորվող և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի միջոցով իրականացվող "Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում" ("Ծրագիր") 2019թ. հունվարի 1–ից մինչև 2020թ. հունիսի 11-ն ընկած ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ:

Մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունը, որ.

- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն,
- Հաշվապահական հաշիվները և ֆինանսական փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական, և ներկայացնում են իրական փաստերը Ծրագրի նպատակներին և ազգային օրենսդրությանը համապատասխան:
- ներքին վերահսկողության ձևավորում և իրականացում խարդախությունը կանխելու և հայտնաբերելու նպատակով:
- Ծրագրի վերաբերյալ ստացված կամ մեր կողմից ֆինանսավորման հետ կապված տեղեկատվության ամբողջականությունը և համապատասխանությունը
- ցանկացած տեղեկատվության և բացահատումների առկայություն, բանավոր կամ գրավոր հաստատմամբ, որոնք կարող են պահանջվել աուդիտորի կողմից աուդիտի իրականացման ընթացքում:

Մեր գիտելիքներն ու համոզվածությունը հիմք ընդունելով՝ հավաստում ենք, որ.

- Մենք Ձեզ տրամադրել ենք բոլոր հաշվապահական գրքերը և օժանդակ փաստաթղթերը:
- Չկան էական գործարքներ, որոնք պատշաճ կերպով գրանցված չեն եղել Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած հաշվապահական հաշվառման հաշիվներում:
- Ներքին հսկողության համակարգը հուսալի է. Ֆինանսական և այլ փաստաթղթերի հաստատումը և վերահսկողությունը, պարտականությունների տարանջատումը, կատարվում է պատշաճ կերպով,
- Ծրագրի միջոցներն օգտագործվել են համաձայն սահմանված բյուջեի,
- Ֆինանսական գործարքներն իրականացվում են ծրագրի նպատակներին և Դրամաշնորհային համաձայնագրի պայմաններին համապատասխան:
- Ֆինանսական միջոցները օգտագործվել են խնայողակա և արդյունավետ եղանակով:
- Չի եղել որևէ խախտում ղեկավար կազմի կամ աշխատակիցների ներգրավման մեջ, որոնք նշանակալի դեր ունեն հաշվապահական հաշվառման և ներքին հսկողության համակարգերում, և որը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական սխալներից և բացթողումներից,
- Չեն գրանցվել վերահսկող կազմակերպությունների կողմից հակաօրինական փաստերի կամ խախտումների բացահայտում, որոնք էական ազդեցություն կունենային ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո որևէ իրադարձություն չի եղել, որը պահանջում է ճշգրտում կամ բացահայտում ֆինանսական հաշվետվություններում:
- Չկան փաստաթղթեր կամ պայմանագրեր հայցեր:
- Մեր կողմից չեն բացահայտվել խարդախության փաստացի կամ կասկածելի դեպքեր, որոնք ազդում են Ծրագրի վրա և կապված են հետևյալ անձանց հետ.
  ա. Ղեկավարություն,
  բ. Ներքին հսկողության գործում նշանակալի դեր ունեցող աշխատակիցներ, կամ
  գ. այլ անձիք, եթե խարդախության դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

Մամիկոն Գասպարյան
ՀՏԶՀ տնօրենի տեղակալ-Մասնաճյուղի տնօրեն

Նարինե Քեռյան
ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ Գլխավոր հաշվապահ